10.12.26 - 11.12.26
09:30
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ ISTC կենտրոն

Ս.թ. դեկտեմբերի 10-ին և 11-ին՝ ժամը 9:30-ին, ԵՊՀ ISTC կենտրոնում տեղի կունենա «Գաղափարները դառնում են լուծումներ. ԵՊՀ «կանաչ» նորարարության հեքաթոն» («Տվյալներ և արհեստական բանականություն բնության համար») խորագրով երկօրյա միջոցառումը:

Միջոցառումն իրականացվում է ԵՊՀ բիզնես ինկուբատորի և Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) «Մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում Հայաստանում» ծրագրի համատեղ նախաձեռնությամբ: Ծրագիրը համաֆինանսավորում են Գերմանիայի, Շվեյցարիայի և Ավստրիայի կառավարությունները:

Թեմատիկ ուղղություններն են.

1. **բնություն և կենսաբազմազանություն,**
2. **ջրային և էկոհամակարգերի կայունություն,**
3. **շրջանաձև տնտեսություն և թափոնների կառավարում:**

Երկօրյա ինտենսիվ աշխատանքների ընթացքում թիմերը մենթորների աջակցությամբ կմշակեն համապատասխան լուծումներ: Նախատեսվում են մրցանակային հետևյալ տեղերն ու դրամական պարգևները.

- **1-ին տեղ՝ 350 հազար ՀՀ դրամ**
- **2-րդ տեղ՝ 250 հազար ՀՀ դրամ**
- **3-րդ տեղ՝ 150 հազար ՀՀ դրամ**

Միջոցառմանը հրավիրված են ԵՊՀ ակադեմիական գծով պրոռեկտոր Էլինա Ասրիյանը, ԵՊՀ միջազգային կապերի, զարգացման և նորարարությունների գծով պրոռեկտոր Միքայել Հովհաննիսյանը, *GIZ-ի* ներկայացուցիչ Դավիթ Քարտաշյանը, ինչպես նաև ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Լևոն Ազիզյանը։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am